ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 54
14 փետրվար 2020թ.

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 09-Ա, թիվ 10-Ա և 12-ը փետրվարի թիվ 11-Ա որոշումները:

Առդիր՝ **3** թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 09-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի,<<Հանրաքվեի մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 3-Ա որոշումը,2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով.

որոշում եմ

1. Սահմանել տեղամասային կենտրոն Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Հացավան համայնքում.
   1) Հացավան համայնքի միջնակարգ դպրոցի շենքում՝հասցեն Հացավան համայնք 4-րդ փողոց թիվ 2
2. Օրենքով սահամնված ժամկետում տեղեկացնել լիազոր մարմին,տարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020թ. փետրվարի 11
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10-Ա

ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով,<<Հանրաքվեի մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով՝

որոշում եմ

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝համայնքի 1-ին և 6-րդ փողոցները:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020 թ. փետրվարի 11
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,84-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը.

որոշում եմ

1. Հացավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի հաշվետվությունը հնգամյա զարգացման ծրագրի 2019 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հացավան համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի հաշվետվությունը հնգամյա զարգացման ծրագրի 2019 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝***համաձայն հավելվածի***:
3.Հանձարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին՝համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020 թ. փետրվարի 12
գ.Հացավան